869_6

Ա. ԱԼՈՒՖ

ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԱՐՀՇԱՐԺՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԵՆՏՐՈՆԸ

(ԱՌԱՋԻՆ ՀԱՄԿԽ-Ը)

ԵՐԵՎԱՆ 1927

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԿԽ-Ի № 56

Ա. ԱԼՈՒՖ

ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ

ԱՐՀԾԱՐԺՄԱՆ

ՂԵԿԱՎԱՐ ԿԵՆՏՐՈՆԸ

(ԱՌԱՋԻՆ ՀԱՄԿԽ-Ը)

Հայոց ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՑԵՐԵՎԱՆ 1927

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԿԽ-Ի № 56

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 3753
ԳՐԱՌ· 250 Բ. ՏԻՐԱԺ 500

ԻՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԿԽ-Ը

Ամբողջ արհշարժման միացման և՝ փետրվարյան հեղափոխության հենց առաջին ամիսներին լայն մասսայական կազմակերպություններ դարձող՝ արհմիությունների համառուսական կենտրոն ստեղծելու պահանջը հատուկ ուժով զգացվեց Պետրոգրադի և Մոսկվայի միությունների մեջ։ Պետրոգրադի և Մոսկվայի արհմիությունների բյուրոները, վորոնց կազմի մեջ արդյունաբերական պրոլետարիատի խոշոր զանգվածներ ընդգրկող կազմակերպություններ էին մտնում և վորոնք ի վիճակի էին արհշարժման միասնականության խնդիրը լուծելու՝ ձգտում էին միասնական կենտրոնի։ Սակայն միայն այդ բյուրոները չէին, վոր նախաձեռնեցին 1917 թվի համառուսական արհմիությունների կոնֆերանսը հրավիրել։ Արհշարժման միասնականության և մի ղեկավար կենտրոն ստեղծելու հարցն առաջին անգամ բանվորների և զինվորների պատգամավորնե-

ի խորհուրդների համառուսական խորհրդակցության բանվորական սեկցիան դրեց և առաջարկեց Պետրոգրադի աշխատանքի բաժնին մայրաքաղաքի արհմիությունների բյուրոյի հետ միասին այդ անդիրն իրագործելու:

Ինչո՞վ բացատրել, որ այսպես նախաձեռնությունը խորհուրդներին եր պատկանում և ոչ արհմիություններին. ինչո՞ւ արհմիությունների միասնական կենտրոն ստեղծելու հարցն այնքան կենսական եր խորհուրդների համար: Մեզ թվում է, այդ ոչ միայն այն պատճառով է, որ խորհուրդները ուզում եյին աշխատանքի պայմանների կարգավորումից և կոնֆլիկտների քննությունից ազատվել, այլ այն, որ այն ժամանակ խորհուրդներում մեծամասնություն կազմող մենշևիկները ուզում եյին իրենց ազդեցությունն ոգտագործել արհշարժման ղեկավարությունը ձեռք ձգելու և այն՝ նեցուկ դարձնելու բուրժուական իշխանության՝ ժամանակավոր կառավարության: Այդ է հաստատում այն կազմակերպչական հանձնաժողովի կազմը, որ ընտրվեց չահագրգռված կազմակերպություններից՝ կոնֆերանսը գլուխ բերելու: Այդ հանձնաժողովի կազմի մեջ մենշևիկներից կային՝ Դ. Կոլցով, Կ. Գվոզդև (աշխատանքի ընկերը), Ն. Գարվի և Վ. Ռուբցով. Մոսկվայից՝ Վ. Գրինևիչ[1]): Պետրոգրադի մենշևիկները, որ այդ հանձնաժողովի կազմի մեջ կային, անմիջորեն կապված չեյին որևե խոշոր արհկազմակերպու-

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԿԽ-Ի ՆՇԱՆԱՎՈՐ ԲԱՅԼՇԵՎԻԿ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ԸՆԿ. ԸՆԿ. ԲԱԽՈՒՏՈՎ, ՇՄԻԴՏ (ՎԵՐԸ), ՍԱԽԱՐՈՎ ՅԵՎ ՈՉՅՈՒ

[1]) Ընկ. Միլոնովն իր „Путеводитель по Всеросс. с'ездам и конференц. профсоюзов" գրքում ասում է, որ ըստ պահված արձանագրությունների դժվար է վորոշել Մոսկվայի կազմ. հանձնաժողովի պատգամավորները: Վորքան կարելի է ընկ. Իգնատովի «Մոսկվայի արհմիությունների կենտրոնի պատմությունից» („Материалы по истор. профдвиж. в России", 4-րդ հավաքածու) այդ ներկայացուցիչներն եյին՝ Դենիսով, Գրինևիչ և Սախարով:

թյան հետ և համարյա չեյին մասնակցել արհմիութիւնների գործնական աշխատանքներին[1]): Ներանց այն նպատակով եյին մացրել հանձնաժողովի մեջ, վոր մենշևիկները կոնֆերանսի կազմակերպման մեջ ղեկավար դեր ունենան:

Զգտելով արհշարժման մեջ ղեկավար դեր ունենալ՝ մենշևիկները կոնֆերանսը գերադասում եյին համագումարից:

«Մենշևիկ Գրինևիչը,—գրում է Իգնատովը,—համառուսական համագումարի հարցով ըգբաղվող Պետրոգրադի խորհրդակցության մասին խոսելիս, ասում եր, թե արհմիութիւնները դեռ նոր են առաջ գալիս, ուստի աննպատակահարմար է համագումար հրավիրել: Այդ պատճառով նա առաջարկում եր վոչ թե արհմիութիւնների համագումար հրավիրել, այլ կենտրոնների կոնֆերանս, վորովհետև սրանք ավելի լավ են կազմակերպված և ավելի փորձված են: Այդպիսի կոնֆերանսը կկարենար քննել արհմիութիւնների ընդհանուր խնդիրները, արհ. շինարարության սկզբունքներն ու ձևերը, աշխատանքի

[1]) Այդ կարելի չե տեսնել այն բանից, վոր նրանցից և վոչ մեկը 1917 թ. ընտրված Պետրոգրադի արհմիութիւնների խորհրդի գործադիր հանձնաժողովի կազմի մեջ չի մտել („Профессиональный Вестник“ № 3-4, 1917 թ.):

որենսդրական պաշտպանությունը,—գործազրկության դեմ կռվելու և տնտեսական պայքարի մեթոդները, ինչպես և 8-ժամյա բանվորական որը»:

Այստեղից պարզ է, վոր այդ խնդրով զբաղվող արհկազմակերպությունների մեջ վիճաբանության առարկան համագումարն եր, և վոր վոչ թե համագումարի, այլ կոնֆերանսի գումարումն եր համապատասխանում մենշևիկների չահերին: Մենշևիկներն ըստ յերևույթին կարծում եյին, թե այդպիսով դյուրությամբ ձեռք կձգեն շարժման ղեկը և այն կուղղեն իրենց ցանկացած կողմը: Բնորոշ է, վոր մենշևիկ Գրինևիչը կոնֆերանսի մասին խոսելիս՝ ի նկատի ուներ ավելի նեղ կազմ, քան այն, ինչ փաստորեն ստացվեց: Նա խոսում եր արհմիութիւնների կենտրոնական բյուրոների կոնֆերանսի մասին:

Ինչո՞վ բացատրել մենշևիկների այդ անսպասելի «մոլի սերը» միջմիութենական կազմակերպությունների հանդեպ, վորոնց իրավունքն ու լիազորությունները նրանք միշտ աշխատել են նվազեցնել: Այդ բացատրվում է նրանով, վոր այդ ժամանակ ստեղծված արհմիութիւնների կենտրոնները չատ քաղաքներում, բացի խոշոր արդյունաբերական կենտրոններից, մենշևիկյան բանվորների

և զինվորների խորհուրդների պատգամավորների ազդեցության տակն էին գտնվում, և մենշևիկներն աշխատում էին այդ ազդեցությունն ոգտագործել։ Յեթե կոնֆերանսի կազմը մի քիչ ավելի լայն ըստացվեց, քան յենթադրվում եր առաջ, և յեթե միջմիութենական կազմակերպություններից բացի՝ առանձին միություններն ել ներկայացուցիչ տվին, ապա այդ պետք է դիտել իբրև զիջում համագումար հրավիրելու կողմնակիցներին։

Առանձին խոշոր միությունների վրա մենշևիկներն ավելի քիչ կարող էին հույս դնել, վորովհետև արդյունաբերական պրոլետարիատի խոշոր կազմակերպությունները՝ մետաղագործներն ու մանածագործները՝ հաստատուն կանգնած էին բայլշևիկների կողմը։ Ծառայողների և մանր ձեռնարկությունների միությունները, ուր մենշևիկների ազդեցությունն ուժեղ եր, այն ժամանակ դեռ կգալի ուժ չէին ներկայացնում և չէին կարող հենարան ծառայել մենշևիկների համար։ Այդ յերևվում է այն ժամանակվա միություններում կազմակերպված պրոլետարիատի կողմից։ Կոնֆերանսին մասնակցում էին 387·000 մետաղագործների, 179·000 մանածագործների ներկայացուցիչներ։ Իսկ ներկայացուցիչ ունեին ընդամենը 1·475·000

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԿԽ-Ի ՆՇԱՆԱՎՈՐ ԲԱՅԼՇԵՎԻԿ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ՝ ԸՆԿ. ԸՆԿ. ԳԼԵԲՈՎ-ԱՎԻԼՈՎ, ՄԱԳԻՏՈՎ (ՎԵՐԸ), ԴԵՆԻՍՈՎ ՅԵՎ ԱՍԱԴԿԻՆ

միութ. անդամ։ Այդպիսով մետաղագործներն ու մանածագործներն ամբողջ կազմակերպված պրոլետարիատի 40%-ն էին կազմում։ Առևտրաարդյունաբերական ծառայողներից 46·000 հոգի ներկայացուցիչ ունեին, այսինքն՝ 4%-ից պակաս։ Ուստի բոլորովին պարզ է, վոր մենշևիկների համար քաղաքական տեսակետից ձեռնտու չէր, վոր արդյունաբերական պրոլետարիատի խոշոր կազմակերպությունները կոնֆերանսին լրիվ ներկայացուցիչներ ունեին։ Անկասկած, հենց այդ հան-

գամանքն էլ ի նկատի ունեին մենշևիկները կոնֆերանսի կազմը վորոշելիս։

Կոնֆերանսի ներկայացուցչությունն այն հաշվով եր բաշխված, վոր խոշոր արդյունաբերական միությունների քիչ տեղ ընկնի։ Ընտրությունները կատարվում եյին վոչ թե ըստ այս կամ այն միության անդամների թվի, այլ ըստ նահանգների։

«Եթե մենք կոնֆերանսում մեծամասնություն չունեցանք,—ասում է իր հուշերի մեջ ընկ. Մատրոսովը, վորը III կոնֆերանսի[1]) բայլշևիկյան ֆրակցիայի քարտուղարությունն եր տանում,—ապա դրա պատճառն այն եր, վոր ներկայացուցչությունը յուրահատուկ ձևով եր՝ վոչ թե ձայների թվին եր համապատասխան, այլ նահանգների։ Եթե դրությունն այլ կերպ լիներ, մենք գերակշռություն կունենայինք»։

Մենշևիկները կոնֆերանսը համագումարից վերադասելով՝ ի նկատի ունեյին նաև այն, վոր կոնֆերանսում ավելի հեշտ կլիներ քաղաքական հարցերը քննելուց հեռու մնալ։

Նախապատրաստական խորհրդակցությունների ժամանակ կոնֆերանսի որակարգի խնդիրը մբաքերի բուռն փոխանակության առարկա յեր դառ-

[1]) Համարհեղինի Ապերատի չհրատարակված մեքենագրությունից։



ԱՌԱՋԻՆ ՀԱՄԿԽ-Ի ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ՝ ՁԱԽԻՑ ԸՆԿ. ԼԱԶՈՎՍԿԻ (Ս.-Դ. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՍՏ), ԱՋԻՑ ԸՆԿ. ՌՅԱԶԱՆՈՎ (ԱՐՏԱՔՐԱԿՑԻՈՆ Ս.-Դ. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՍՏ), ՅԵՐԿՈՒՍՆ ԵԼ ՀԱՐԵՑԻՆ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻՆ

նում։ Մոսկվայի արհմիությունների բյուրոյում բայլշևիկները առաջարկում եյին որակարգի մեջ մտցնել հետևյալ հարցերը.—արհմիությունների և քաղ. կուսակցությունների փոխհարաբերությունը, արհմիությունների դերը պրոլետարիատի դասակարգային կռվի մեջ, արհմիությունների վերաբերմունքը պատերազմի, ընթացիկ քաղաքական դրության և ժամանակավոր կառավարության նրկատմամբ։

Մենշևիկները, վոր կապմակերպչական հանձնաժողովում մեծամասնություն ունեյին, այս խնդիրը չեյին դնում կոնֆերանսի առաջ. իսկ կոնֆերանսն ինքը, ուր դարձյալ մենշևիկներն եյին մեծամասնություն կազմում, այդ հարցը չեր մտցրնում որակարգի մեջ: Այս տեսակետից շատ բնորոշ և այն միջադեպը, վոր տեղի ունեցավ Գ. Զինովյեվի բանաձևի հետ՝ ընթացիկ քաղաքական մոմենտի մասին, վոր Դ. Ռյազանովն աշխատում եր կոնֆերանսին առաջարկել: Կոնֆերանսը հնարավոր չհամարեց այդ բանաձևը քննության առնելու և նույնիսկ թույլ չտվեց այն հրապարակ հանելու: Այդ առաջարկությունը մերժելիս՝ կոնֆերանսի մեծամասնությունն այն եր պատրվակ բռնում, վոր ը. Գ. Զինովյեվի զեկուցումն այդ մասին չի լսել և վոր չլսած զեկուցման մասին չի կարող բանաձև առաջարկել: Սակայն այդ մի ձևական պատճառ եր. իսկական պատճառն այն եր, վոր մենշևիկները չեյին ցանկանում կոնֆերանսում քաղաքական հարցեր քննության առնել: Այդ յերևում է այն մեկնաբանությունից, վոր մենշևիկներն այնուհետև տալիս եյին III կոնֆերանսի աշխատանքներին: Վ. Գրինևիչը, կոնֆերանսի մենշևիկյան մասի ղեկավարներից մեկը և ժամանակավոր Համարհմխորհի

առաջին նախագահը, կոնֆերանսից հետո գրում եր.—

«Արհեստակցական միությունների խնդիրներ հարցն ամենից բուռն և յերկարատև վիճաբանություններ առաջ բերեց: Այդ հարցի մասին ընդունված բանաձևն ստիպեց փոքրամասնությանն իր քվեարկությունը հատուկ հայտարարությամբ պատճառաբանել. սակայն, այնուամենայնիվ, մենք պնդում ենք, վոր այդ հարցից առաջ յեկած տարաձայնությունները վոչ մի առնչություն չունեն արհշարժման հարցերի հետ (ընդգծումը մերն է Ա.Ա.), այլ վերոհիշյալ քաղաքական տարաձայնությունների հետ են կապված: Փոքրամասնությունը ձայն տվեց արհմիությունների խնդիրներ բանաձևի դեմ վոչ թե այն պատճառով, վոր հակառակ եր այն բանին, ինչ այնտեղ ասված եր, այլ այն պատճառով, վոր այնտեղ ասված չեր այն, ինչ նա անհրաժեշտ եր համարում ասել (ընդգծում Գրինևիչինն է՝ Ա.Ա.): Իսկ այս վերջինն այն է,—ճիշտ է այն, թե սխալ՝ տեղը չէ խոսելու,—ինտերնացիոնալական սոցիալիստական մտքի ուղղություններից միայն մեկի հայացքն է»[1]):

[1]) „Професс. Вестник“ № 1-2, 1917 թ.

Մենք տեսնում ենք, վոր՝ ինչպես կոնֆերանսից հետո, այնպես էլ կենֆերանսի ընթացքում՝ մենշևիկները ճգնում էին ապացուցել, թե քաղաքական տարաձայնությունները վոչ մի կապ չունեն արհշարժման հետ: Դրանց այդ գիծը, ինչպես դրժվար չե նկատել, չեր հարմարվում արհշարժման մեջ իրապես ղեկավարություն ձեռք բերելու նրանց ձգտման հետ:

Ինչո՞ւ էին մենշևիկները այնպես համառորեն հրաժարվում արհշարժման հարցերը քաղաքական հարցերի հետ կապելուց, ինչո՞ւ էին նրանք կոնֆերանսներում և առհասարակ արհկազմակերպությունների մեջ քաղաքական հարցերը քննելուց խուսափում: Նրանք իբրև հիմնական դրդապատճառ այն էին մեջ բերում, թե ձգտում են արհշարժման միասնականությունն ապահովել և վախենում են պառակտումից:

Սակայն՝ իրոք պատճառն այդ չեր: Նրանք, անշուշտ, արհշարժման միասնականությանը կողմնակից էին, ինչ չափով վոր այդ նրանց այդ ժամանակաշրջանում հնարավորություն եր ընձեռում ղեկավար դիրք գրավելու ամբողջ արհշարժման մեջ, և վոչ թե նրա մի մասում, և այդպիսով ամբողջ արհշարժումը քարշ տալու բուրժուական իշ-

խանության հետևից: Բայց նրանք, իսկապես, բնավ չեյին հրաժարվում իրենց քաղաքական գիծն անցկացնել արհմիություններում. նրանք միայն խուսափում եյին արհմիութենական բեմում քաղաքական հարցերի մասին մարտ ընդունելուց: Վոր այդ իսկապես այդպես է, յերևում է այն ժամանակվա ոչխ. մինիստր մենշևիկ Սկոբելևի հուշերից[1]):

«Ցես հիշում եմ, վոր իմ՝ կառավարության մեջ մտնելուց առաջ,—պատմում է Մ. Սկոբելևը,—բռնկվեցին մի շարք հարցեր վոչ միայն նեղ արհեստակցական շարժման վերաբերյալ այն իմաստով, ինչ այժմ է տեղի ունենում, այլ բազմաթիվ քաղաքական հարցեր, վոր առանց դասակարգային արհեստակցականորեն կազմակերպված ապպարատ ունենալու հնարավոր չեր լուծել... Ցես այդ զգացի, յերբ մարմարյա պալատը մտա և նստեցի այն կարմիր սեղանի մոտ, վոր այժմ Շմիդտի առանձնասենյակումն է: Ամբողջ լայն բանվորական մասսան, վոր հեղափոխությունից առաջ չեր մասնակցում արհշարժման և բավարար դասակարգային դաստիարակություն չուներ, կարծում եր, թե հանձինս ժամանակավոր կառավարության՝ բոլոր

[1]) Համարհմխ. Արհպատ. չհրատարակված մեքենագրությունից։

հարցերը լուծվում են պարզ կերպով—բավական էր դնալ կառավարության մոտ՝ և վերջացավ։ Բերենք մի կոնկրետ դեպք.—իմ մինիստրության հենց առաջին որն առանձնասենյակս յեկավ Ֆաբկոմի ներկայացուցիչը և հայտարարեց, թե՝ ձեռնարկատիրոջը դուրս ենք վռնդել և ահա 4 որ է, ինչ դործարանը վարում ենք առանց ձեռնարկատիրոջ. և նույնիսկ անկեղ պահարանի բանալին էլ խլել ենք. սակայն դանձարկղում յեղած գումարը հազիվ 4 որվա բավեց, վորից հետո ձեռնարկությունը կանգ առավ. բարի յեղեք կարգադրել, վոր ֆին. մինիստրությունը մեզ միջոցներ բաց թողնի։ Բնական է, վոր այդ՝ վոչ թե նեղ արհեստակցական, այլ քաղաքական հարց է, և այդպիսի հարցերը լուծելու համար պետք էր դասակարգային արհեստակցական կազմակերպություն լիներ» (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.)։

Այս խոսքերից բոլորովին պարզ է, վոր մենշևիկները ձգտում էին արհմիություններն ոգտագործել՝ իրենց գիծն անցկացնելու բանվոր մասսաների մեջ, և նրանք բնավ չեյին հրաժարվում արհմիություններին զանազան քաղաքական հանձնարարություններ անելու։ Մենշևիկների այդ շրջանում տարած բանվոր դասակարգի «ինքնասահմանափակման» դիծը, վոր եյապես նշանակում էր՝ բանվոր դասակարգի շահերն ստորադասել բուրժուազիայի շահերին,—մենշևիկների կարծիքով պետք է իրագործվեր արհմիությունների միջոցով. իսկ այդ՝ բուռ եյության, անշուշտ, քաղաքական դիծ է։

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԿԽ-Ի ՆՇԱՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ՝ ՁԱԽԻՑ ԸՆԿ ՇԼՅԱՊՆԻԿՈՎ (ԲԱՅԼՇԵՎԻԿ), ԱՋԻՑ ԸՆԿ. ԳՈՅԼՑՄԱՆ (ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻՍՏ)։

Այդպիսով դժվար չե տեսնել, վոր արհշարժման միասնականության պահպանման ձգտումն ու պառկատման վախը բնավ չեյին խանգարում, վոր մենշևիկները վարեն քաղաքական գիծ տանե-

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
Ա 7/8112

յին: Ուրիշ պատճառներ կային, վոր նրանք չեյին ուզում արհկազմակերպութիւններին մեջ քաղաքական հարցեր շոշափել.—նրանց համար արհմիութիւնները ձեռնտու քաղաքական մարտաբեմ չեյին: Բուրժուազիային ոժանդակելու գիծ բռնելով՝ մենշևիկները հենարան եյին գտնում ծառայողների և մի քանի հետամնաց բանվորական խմբակցութիւնների մեջ: Բանվորական պատգամավորների խորհուրդներում մենշևիկներն եսեռների հետ միասին մեծամասնութիւն եյին կազմում: Արհմիութիւններում ուժերի փոխհարաբերութիւնն այլ եր: Նախ և առաջ եսեռներն այստեղ համարյա վոչ մի կշիռ չունեյին: Ուստի միութիւնների մեջ մենշևիկների ուժը—խորհուրդների համեմատութիւամբ—հենց նրանով եր թույլ, վոր նրանք այստեղ այն ազդեցիկ դաշնակիցը չունեյին, ինչ խորհուրդներում: Խորհուրդներում մենշևիկների յեռևից գնացող միջին խմբակցութիւնների ազդեցութիւնն ել միութիւններում զգալի թույլ եր: Այս բոլորը հաշվի առնելով՝ մենշևիկները վստահ չեյին, թե միութիւնները նրանց քաղաքական գիծը կպաշտպանեն. ուստի արհմիութիւններում նրանք քաղաքական խնդիրները լռության եյին մատնում: Այդ լռությունը բանվոր դասակարգի

արթուն հսկողությունը քաղաքական հարցերի նրկատմամբ թուլացնում եր և մենշևիկներին հնարավորություն տալիս բուրժուազիային ոժանդակելու իրենց գիծը հեշտությամբ անցկացնել:

Կոնֆերանսում, ինչպես հայտնի յե, յերկու բլոկ եյին պայքարում՝ «հեղափոխական-դեմոկրատիկ», մենշևիկների գլխավորությամբ, և հեղափոխական-ինտերնացիոնալիստական, բայլշևիկների գլխավորությամբ: Այդ բլոկները հաստատուն խմբակցութիւններ չեյին և ամրակուռ կարգապահություն չունեյին: Այսպես, որինակ, այդ բլոկներից յուրաքանչյուրի հավաքած քվեների թիվը վիճելի հարցերում մշտապես տատանվում եր: Բայլշևիկյան բլոկի առաջարկությանն թեր ձայն եյին տալիս մերթ՝ 75, մերթ 77, մերթ 86, մերթ 78 հոգի: Հետևաբար բայլշևիկյան բլոկին հարող պատվիրակների թիվը պիտի սահմանել 75–78: Մոտ 10 հոգի մեկ այս, մեկ այն բլոկին եր ձայն տալիս: Մենշևիկյան բլոկի առաջարկներն ստանում եյին 89, 99, 96, 98 ձայն: Հետևաբար մոտ 10 հոգի ամեն հարցում համակարծիք չեր մենշևիկյան բլոկին: Այդպիսով մենշևիկյան բլոկը մոտ 20 ձայնի առավելություն ուներ, թեև վոչ կայուն:

Բայլշևիկական բլոկն ավելի կուռ խմբակցու-

թյուն եր, թեև այստեղ էլ ներքին տարաձայնություններ կային։ Կոնֆերանսում գործոն դեր էին խաղում Ռյազանովն ու Լազովսկին, վորոնք թեև բայլշևիկյան բլոկումն էին, սակայն պաշտոնապես դեռ բայլշևիկ չէին։ Այնուհետև բայլշևիկյան բլոկումն էին Գոլցմանն ու Գաստևը, վորոնք ինդուստրիալիստ ինքնուրույն ուղղության ներկայացուցիչներ էին և մի քանի հարցերում բայլշևիկներին համակարծիք չէին։

Վորոշ հետաքրքրություն ունի այն հարցը, թե ինչ գումարով եր կազմակերպվել III կոնֆերանսը, մանավանդ, վոր մթություններն այն ժամանակ դեռ յերիտասարդ էին և ֆինանսապես թույլ, վոր կարենային հեշտությամբ այնքան ծախսերի դիմանալ։

«Զգիտեմ՝ կառավարությո՞ւնն եր միջոցներ տալիս, թե խորհուրդը,—ասում է ընկ. Մատրոսովն իր հուշերի մեջ,—բայց հաստատ հիշում եմ, վոր կոնֆերանսին մասնակցել ցանկացողները վորոշ գումար պիտի մուծեին։ Հիշում եմ, վոր մեզ մոտ էլ վորոշ գումար էին մուծում և այդ դեպքում միայն ստանում էին քվեների վորոշ քանակ։ Զգիտեմ՝ փողը բավականացնո՞ւմ եր, թե չե։ Հիշում եմ, վոր բնակարան ձրի էին տալիս։ Խոշոր թվով պատգամավորներ տեղական կազմակերպությունների ծախսով էին գնում։ Այսպիսով կոնֆերանսի ծախսը մնում եր կազմակերպչական ծախսը, պատգամավորների ծախսը տեղական կազմակերպություններին վրա յեր ընկնում»։

«Հիշում եմ,—ասում է այդ առթիվ կոնֆերանսի մի այլ մասնակից՝ Բրուկը,—վոր Խարկովի կենտ. Բյուրոն կոնֆերանսի գումարման առթիվ կարծեմ մոտ 2000 ռ. մուծեց։ Մեզ նախազգուշացրին, վոր ի նկատի առնենք, թե՝ «կառավարությունը այդ բանի համար փող չի տա, և մենք էլ ցանկություն չունենք փող ստանալու»։ Մենք համաձայնվեցինք, վոր այդ իրոք անհարմար է։ Զգիտեմ՝ բավականացրե՞ց այդ փողը, սակայն հաստատ կարող եմ ասել, վոր կոնֆերանսը հիմնված եր գլխավորապես տեղական միջոցների վրա»։

Այդպիսով կարելի յե հաստատված համարել, վոր կոնֆերանսի ծախսերը գլխավորապես տեղական կազմակերպություններն էին հոգում. թեև Պետրոգրադի Խորհուրդն էլ վորոշ միջոցներ տալիս եր։

«Ինչ վերաբերում է խորհրդի և ժամանակավոր կառավարության նյութական հարաբերություններին,—ասում է Սկոբելևը,—ապա բնական է, վոր նյութական կողմը, համենայն դեպս պատգամավոր-

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԿԽ-Ի ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻՑ ՆՇԱՆԱՎՈՐ-ՆԵՐԸ՝ ԿՈՅԼՑՈՎ, ԳՐԻՆԵՎԻՋ (ՅԵՂԵԼ Ե ԱՌԱՋԻՆ ՀԱՄԿԽ-Ի ՆԱԽԱԳԱՀԸ) ՅԵՎ ԳԱՐՎԻ

ների՝ տեղերից ժամանելը և այն ամենը, ինչ փող եր պահանջում, ի հարկե, Պիտերի Խորհրդի հաշվին եր, վորովհետև այլ կերպ ել լինել չեր կարող։ Իսկ Խորհուրդն ել ապրում եր կամավոր նվիրատվություններով»։

Այս բոլոր փաստերից կարելի յե յեզրակացնել, վոր կառավարությունը կոնֆերանսի վրա փող չեր ծախսում։

III կոնֆերանսն ընդունեց արհմիությունների համառուսական համագումարի կանոնադրությունը։ Բնորոշ են այն սկզբունքները, վորոնք կանոնադրության հիմքն են կազմում։ Ըստ այդ կանոնադրության ներկայացուցիչ ունեյին՝

«ա) առանձին միությունները ըստ նվազող առաջատվության (3–5 հազար անդամ՝ 1 պատվիրակ 20–40 հազար՝ 4 պատգամավոր, 40–80 հազար՝ 5 պատգամավոր և այլն)։ բ) համառուսական միությունների կենտ. վարչությունները (2-ական պատգամավոր) և շրջանային վարչությունները (1-ական պատգամավոր)։ գ) տեղական արհմիությունների խորհուրդները (դարձյալ նվազող առաջատվության սկզբունքով) և դ) Համարհմխորհը (3 պատ.)»։

Այս կանոնադրությունը կոնֆերանսում բուռն վիճաբանություն առաջ բերեց, վորովհետև բոլշևիկները պահանջում եյին ուղղակի համեմատականություն (պրոպորցիա) պատգամավորների ընտրության ժամանակ։ Այդ առաջարկը չընդունվեց այն պատճառով, վոր մենշևիկյան մեծամասնությունը պարզ զգում եր, վոր նա կարող է հենվել միայն փոքր միությունների վրա։ Մենշևիկները՝ դիտակցելով իրենց ազդեցության թուլությունը խոշոր կազմակերպությունների մեջ՝ ճգնում եյին խոշոր միությունների ներկայացուցիչների թվի խուզելով՝ համագումարին իրենց մեծամաս-

նութիւնն ապահովել։ Այդ հաշիվներն, ինչպես գիտենք, սիրալ դուրս յեկան. և բանվոր մասսաների և արհմիութիւնների ձախացման պրոցեսը III կոնֆերանսից հետո այնպես թափով առաջ ընթացավ, վոր արդեն մի քանի ամիս հետո մենշևիկները կորցրին իրենց վոտի տակի հողն արհկազմակերպութիւններում և ստիպված եյին արհշարժման վրա դեկավար ազդեցութիւն ձեռք բերելու հույսից ձեռք քաշել։

III կոնֆերանսին ընտրվել եր առաջին Արհմիութիւնների Համառուսական Կենտրոնական Խորհուրդը՝ կազմված 35 հոգուց, վորից 15-ն ապրում եր Պետրոգրադում, 5-ը Մոսկվայում և 15-ը գավառներում։ Համարհմկենտխորհի մասին կոնֆերանսի ընդունած վորոշումով նրա կազմից ընտրված եր գործկոմ, վորի մեջ մտնում եյին Լենինգրադի և Մոսկվայի Խորհրդի անդամները։ Գործկոմն 9 հոգուց եր կազմված, վորից 5-ը մենշևիկ եյին, 4-ը բայլշևիկ։ Գործկոմի կազմն այդպիսով լիովին արտացոլում եր կոնֆերանսի հիմնական քաղաքական խմբավորումները։ Այդ կազմը միաժամանակ վորոշում եր արհշարժման նոր ծագած կենտրոնի ներքին թուլութիւնը և այդ շարժման

հիմնական սկզբունքային խնդիրներում նրանց դատապարտում անգործութիւն։

Եթե հաշվի առնենք այդ ժամանակ ծավալված քաղաքական պայքարի խիստ սրութիւնը, ապա հեշտ կլինի հասկանալ, թե վորքա՞ն քիչ բան կարող եր անել մի որգան, վոր կազմված եր համարյա հավասար թվով մենշևիկներից և բայլշևիկներից։ Գործկոմի նախագահ եր ընտրվել մենշևիկ Վ. Գրինևիչը, փոխնախագահ՝ բայլշևիկներին հարող Դ. Ռյազանովն ու մենշևիկ Ֆ. Զերեվանինը, քարտուղար՝ Ա. Լոզովսկին, վոր կոնֆերանսում բայլշևիկյան բլոկին միացավ։ Թե վորքան խախուտ եր կոնֆերանսից հետո մենշևիկների դրութիւնն առաջին Համարհմկենտխորհում, յերևում է նրանից, վոր կոնֆերանսից 2 ամիս հետո գործկոմը նախապահական ճգնաժամի մեջ եր։ Այդ տեղի ունեցավ, յերբ արհմիութիւնների ներկայացուցիչները դեմոկրատիկ խորհրդակցութիւնի ժամանակ բուրժուազիայի հետ կոալիցիա կազմելուն դեմ արտահայտվեցին։ Վ. Գրինևիչը, վոր համաձայն չեր այդ վորոշման, նախագահութիւնից հրաժարվեց. նրան փոխարինեց Զիրկինը, վոր այն ժամանակ թեև մենշևիկ եր, բայց դեմ եր կոալիցիային։ Այդ ժամանակ արհշարժման մեջ մեծամասնութիւնն իս-

կապես պատկանում եր արդեն բայլշևիկներին.— այդ յերևում է այն բանից, վոր միությունների ներկայացուցիչների 70%-ը դեմոկրատիկ խորհրդակցության ժամանակ հարեց բայլշևիկներին: Սակայն մենշևիկները չեյին ընդունում, թե պարտվել են, և շարունակում եյին կառչել այն իրավունքներին, վոր III կոնֆերանսն եր նրանց տվել:

III կոնֆերանսում ընտրված առաջին Համարհմկենտխորհն, ըստ նրա մասին յեղած վորոշման՝ վոչ մի իրավունք չուներ շարժումն ղեկավարելու: Վորոշումը պահանջում եր՝ «Ռուսաստանի գոյություն ունեցող բոլոր արհմիությունների հետ կապ պահպանել», «համագործակցություն ստեղծել աշխատանքի առանձին ճյուղերում շրջանային և համառուսական միությունների միջև», «ուրիշ յերկրների արհմիութ. կետրոնական որգանների հետ կապ հաստատել», «նախապատրաստել և հրավիրել I համառուսական արհմիութենական համագումար», պարբերական որգան հրատարակել: Այստեղ մի բառ անգամ չկար արհշարժման ղեկավարության, բոլոր արհկազմակերպությունների՝ Համարհմկենտխորհի ցուցումներին յենթարկվելու, սրա՝ առանձին միությունների աշխատաքներին վերահսկելու մասին: Համարհմկենտխորհի ֆունկցիա-

ները խիստ սահմանափակված եյին. այդ բանը մենշևիկների մտադրությանը համապատասխանում եր, վորովհետև նրանք դեմ եյին, վոր Ռուսաստանում արհշարժման միասնական և ամբակուռ կենտրոն ստեղծվի: Առաջին Համարհմկենտխորհը, վոր ստեղծվեց արհմիությունների III կոնֆերանսում և տևեց 17 թ. հունիսի վերջից մինչև 18 թ. հունվարը (մինչև արհմիությունների I համագումարը), թե՛ իր կազմով և թե՛ իր ֆունկցիաներով, այդպիսով, արհշարժման մի ամբակուռ կենտրոն չեր ներկայացնում: Այդպիսի մի կենտրոն սկսեց ստեղծվել միայն այն ժամանակ, յերբ արհշարժման ղեկն անցավ բայլշևիկների ձեռքը:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0044767

(084)

A I/8117

ԳԻՆՆ Է 20 ԿՊՊ